ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասն իսկզբանե ունեցել է հետևյալ տեսքը. «*Մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը կալանքի տակ պահելու ժամկետը հաշվակցվում է ազատազրկման, կարգապահական գումարտակում պահելու ձևով նշանակված պատժին՝ մեկ օրը հաշվելով մեկուկես օրվա դիմաց (...):*[1]»:

Սակայն 2004թ. Երրորդ գումարման Ազգային ժողովը ՀՕ-97-Ն օրենքով[2] փոփոխության ենթարկեց 69-րդ հոդվածի 3-րդ մասը՝ հավասարեցնելով նախնական կալանքի տակ պահելու մեկ օրն ազատազրկման և կարգապահական գումարտակում պահելու ձևով նշանակվող պատիժների մեկ օրվան:

Այսինքն, դեռևս 2003թ. օրենսդիրը որդեգրել էր ավելի մարդասիրական մոտեցում ազատազրկման ձևով նշանակվող պատիժների հաշվակցման հարցում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախնական կալանքը ենթադրում է ավելի խիստ մեկուսացում և պահման այլ ավելի խիստ պայմաններ: Այսպիսով, այդ մոտեցումն ավելի համահունչ էր քրեական օրենսգրքի 11-րդ հոդվածով սահմանված մարդասիրության սկզբունքին:

Հայտնի փաստ է, որ քրեական գործերի քննությունը կարող է ձգվել մի քանի ամիս և ավելի, իսկ այդ ողջ ընթացքում անձը կարող է գտնվել նախնական կալանքի տակ: Ընդ որում, գաղտնիք չէ, որ ներպետական դատարանների կողմից կալանավորումը կիրառվում է որպես խափանման հիմնական միջոց՝ գրեթե ամեն անգամ բավարարելով մեղադրանքի կողմի միջնորդությունը: Այս տենդենցն այժմ էլ շարունակում է մնալ ակտուալ:

Ընթացիկ տարվա հուլիսին Ռուսաստանի Դաշնության Պետական դուման ևս ընդունել է օրենք, որով վերջնական պատժաչափը հաշվարկելիս կալանավայրում պահման մեկ օրը հավասարեցվում է ազատազրկման մեկուկես օրվան[3]:

Գերմանիայում կալանքի մեկ օրը համապատասխանում է ազատազրկման մեկ օրվան, սակայն հաշվի առնելով այն, որ այլ երկրներում կալանքի կամ ազատազրկման պայմանները կարող են լինել ավելի խիստ և ոչ բարվոք՝ նախատեսվում է, որ դատարանն իր հայեցողությամբ կարող է օտար երկրում կալանքի և ազատազրկման ժամկետը հաշվակցել Գերմանիայում որպես պատիժ նշանակվող ազատազրկմանը՝ ավելի մեծ (ընդ որում՝ վերին սահման չի նախատեսվում) հարաբերակցությամբ[4]:

Հոլանդիայի քրեական օրենսգիրքը սահմանում է, որ քրեական գործի քննության ընթացքում նախնական կալանքի, հոգեբուժական կամ կլինիկական հաստատությունում գտնվելու, արտասահմանում էքստրադիցիայի սպասելիս կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածը հաշվակցվում է Հոլանդիայում ազատազրկման տեսքով նշանակվող պատժին՝ առանց սահմանելու որևէ հարաբերակցություն, այսինքն՝ այստեղ ևս թողնելով դատարանի հայեցողությանը[5]:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության գործող խմբագրությամբ 73-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ***անձի իրավական վիճակը բարելավող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով:***

---

[1] http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=22625
[2] http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=1653
[3] http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_10699/207b91aef1e7f3c105a73b4d567ea519ee2d705b/
[4] *Գերմանիայի քրեական օրենսգրքի 51-րդ հոդված*
[5] *Նիդեռլանդների Թագավորության քրեական օրենսգրքի 27-րդ և 27(a)-րդ հոդվածներ*

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մասի սահմանմամբ՝ *նորմատիվ իրավական ակտը պարունակում է անցումային դրույթներ, եթե անձի իրավական վիճակը բարելավող նորմատիվ իրավական ակտին նախատեսվում է տալ հետադարձ ուժ, կամ անձի իրավական վիճակը բարելավող իրավական ակտին հետադարձ ուժ տալու համար անհրաժեշտ է սահմանել համապատասխան նորմեր: Այս դեպքում նորմատիվ իրավական ակտի անցումային դրույթներով սահմանվում են՝*

1) նորմատիվ իրավական ակտը կամ դրա այն մասերը, որոնց տրվում է հետադարձ ուժ.

2) հետադարձ ուժ տալու իրավակարգավորումների (ժամկետների, պայմանների, անձանց շրջանակի) համար անհրաժեշտ համապատասխան նորմեր:

Ըստ այդմ, Նախագծի 2-րդ հոդվածով (անցումային դրույթ) առաջարկվում է սահմանել օրենքի հետադարձ ուժի ժամկետը, որն ընդգրկում է ընդհուպ մինչև 2004թ. հարուցված քրեական գործերը:

3. Ներկայացված նախագծի ընդունումը մի կողմից հնարավորություն կտա զգալիորեն բեռնաթափել քրեակատարողական հիմնարկները՝ մասնակիորեն լուծելով դրանց գերբեռնվածության խնդիրը: Մյուս կողմից՝ հարյուրավոր դատապարտյալների և նրանց ընտանիքների համար պատժաչափի անգամ ոչ մեծ կրճատումը պետության կողմից իրենց հանդեպ մարդասիրության լավագույն դրսևորումը կլինի: